

## ԲՈԼՈՐԱԲԵՐԴ (ՊՌՈՇԱԲԵՐԴ) ԱՄՐՈՑԸ

ԺԲ-ԺԴ գարերի Սիւնեաց Վայոց ձոր գաւառի ամենանշանաւոր հասարակական-քաղաքական, չինարարական-մշակութային կարևորութիւն ներկայացնող շրջաններից էր Պոռչեան և Խաղբական տիրոյթը: Ամրոցաշինութեան եւ պաշտպանական ճարտարապետութեան իմաստով, Պոռչեանների իշխանութիւնը չափ կարեւոր դեր է խաղացել յատկապէս Սիւնեաց ետթագաւորութեան ժամանակաշրջանում: Այս շրջանում են կառուցուել ու վերանորոգուել իշխանութիւն տարածքում եւ մինչեւ այսօր զոյսութիւն ունեցած մի չարք ամրոցներ, քանզի տարածքի ֆիզիկա-աշխարհագրական միջավայրը եւ անցեալ հարիւրամեակներից ժառանգութիւն ստացած պաշտպանական մի շարք կառոյցներ, հանդիսացել են այն առաջնային նախադրեակները, որոնց լաւագոյն ձեւով օգտագործումն ու կիրառումը, հնարաւոր գարձրեցին ամրացնել եւ յուսալի գարձնել բաւական ընդարձակ այս իշխանութիւնը (գծ. 1):

Պոռչեանների իշխանութիւնը բաղկացած է եղել մի քանի կալուածքներից, որոնցից ամէնից ընդարձակը ձահուկի արեւելեան մասն էր, Վայոց Զորի Արփա գետի աջակողմեան վասակ՝ Ազատ գետի հովիտը, Գեղարդավանքը եւ Կեշառիսը իրենց վանքապատկան կալուածքներով հանդերձ: Վայոց Զոր գաւառում Պոռչեանների զիխաւոր իշխաննիստը՝ Սրկղունք աւանն էր<sup>1</sup>, ուազմավարչական կենտրոնը՝ Բոլորաբերդը, իսկ հոգեւորը՝ Թանատ-Գլաձոր վանական հասաւառութիւնը: Պոռչեանների երկրորդ կենտրոնավայրը հանդիսացել է Մարտիրոս աւանը, որ գտնուում է Վայոց Զորի հարաւային սահմանամերձ

1. Սրկղունք կամ Սարկողովք է կոչուել մինչեւ միջ. դարը, որից յետոյ գիւղաւուր զերանուանուել է Վերնաշէն, ՅԱԿՈՒՆԱՆ Բ. Ա., Սովետական Հայաստանի տեսարժան վայրերը, Երևան, 1959, էջ 165):

գոտում<sup>2</sup> (գծ. 2): Պոռշեանների տոհմի շինարարական գործունեութեան նշանակալից իրազորդումներից են Արեղանց կամ Գայլեձոր ու Թանահատ վանքերը<sup>3</sup>: Հստ Գ. Յովսէփիանի, Բաշքենդում էր (այժմ՝ Վերաշէն) գտնուում Պոռշեանների իշխանական պալատը: Համաձայն Հեղինակի, «մինչեւ վերջին ժամանակները մնացել էին զերեւս պարագի մը կամ պարսպի դրան կամարը» (բարաւորը - Ա. Ա. Զ.): Պոռշեանց գինանշան համարուած, բարձրաքանդակ առիւծներով եւ պարսպի ու եկեղեցու մնացորդներով»<sup>4</sup> (նկ. 7):

Անդրադաստաններ Պոռշեանների իշխանութեան սարածքում դիրքորոշուած ամրոցներին Վայոց Ձոր և Շահապոնք գաւառներում: Յաւօք, ամրոցների մասին տեղեկութիւնները շատ սակաւ են, պատմիչները միշտ չեւ, որ նշում են նրանց տեղազրութիւնը: Հ. Ղ. Ալիշանի «Միասկան»<sup>5</sup>, Գ. Յովսէփիանի «Խաղբակեանք կամ Պոռշեանք Հայոց Պատմութեան մէջ»<sup>6</sup> աշխատութիւններում եւ ժամանակակից լրագրող Ա. Այվազիանի «Նախիճնականի ԽԽՍՀ Հայկական յուշարձանները»<sup>7</sup> աշխատութիւններից եւ նրանց կցուած քարտէզներից, մեզ յաջողուեց, համոզիչ ճշտութեամբ, սահմանել Պոռշեան իշխանների տիրոյթները Միւնեաց աշխարհում: Հ. Ղ. Ալիշանի մօտ նկարագրուած Պոռշեաններին պատկանող Շահապոնք գաւառի բոլոր գիւղերի և որոշ ամրոցների նկարագրութիւնը, Հնարաւոր զարձրեց վերականգնել գաւառամասի սահմանները ձահուկում, իսկ Գ. Յովսէփիանի աշխատութիւնից՝ Վայոց Ձորի Պոռշեաններին պատկանող գիւղերի տեղեկութիւններից եններով, յաջողուեց հզրափակել այդ գաւառի սահմանները:

Գծ. 3ում տեղազրուած են իշխանական տիրոյթում երթեմնի բոլոր այն բերդերը, որոնք մեզ յաջողուել է գտնել նշուած աղբիւններից, ըստ որի, Վայոց Ձոր գաւառում գտնուել են (հրամակից-հարաւ) Բոլորաբերդ, Նորաշէն (Եղեգնաձոր)<sup>8</sup>, Ազարականը ամրոցները, իսկ Շահապոնքում՝ Ջրունել, Սնուշաւան, Նշուու, Թերքեշ, Շահապոնք, Աշինամբ, Վայխիր, Խոռնի ամրոցները: Հակուած չենք հաստատելու,

2. ՅՈՎԱԿԱՓԱՆ Գ., «Պոռշեանի եւ Խաղբակեանի Հայոց պատմութեան մէջ», Երևան, 1969, էջ 23:
3. ՄԱԿԱՆԴԻՆ Հ. Հ., «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան», Երևան, 1952, համ. Գ. Հ., էջ 115, (ՅՈՎԱԿԱՓԱՆ Գ., նէ. աշխ., էջ 36-45):
4. ՅՈՎԱԿԱՓԱՆ Գ., հշ. աշխ., էջ 19:
5. ԱԼԻՇԱՆ Հ. Անդրեյնի, «Միասկան», Վենեափկ, 1893:
6. ՅՈՎԱԿԱՓԱՆ Գ., հշ. աշխ.:
7. ԱՅՎԱԶՅԱՆ Ա., «Նախիճնականի ԽԽՍՀ հայկական յուշարձանները», Երևան, 1986:
8. ՀԱՅ ՀԱՅ ՄԻՔԱՅԻԼ, ՎՐՈՒ. ՅՈՎԱԿԱՆՆԵԼՍՆԵՆ («Հայաստանի Բիրդերը», Վենեափկ, 1970, էջ 363-366), Եղեգնաձորի բերդը նոյնն է ինչ Եղեգիսի, Արտեմազի, Ցախազքարի, Ամրաւայ բերդի ամրոցը, առկայն վերը նշուած Եղեգնաձորի ամրոցը գտնուած է Եղեգնաձորի շրջկենարունի հարաւ-արեւմտիան մասուցներում, մի փոքր բարձուանքի վրայ եւ կառուցուած է կիլոպահն շաբուածքով: Այժմ կառոյցից մնում

որ բոլոր այս ամրոցները նորոգուել ու օգտագործուել են Պռշեան-ների տիրապետութեան շրջանում, սակայն կարծում ենք, որ Զաքար-եաններից բաժին հասած Սիւնիքի այս տարածքները ճշտելու ժամա-նակ, անպայմանօրէն հաշուի են առնուել գոյութիւն ունեցող ամրոց-ների զիրորոշումները տիրոյթի սահմանազատ շրջաններում: Գծա-գրից պարզութ երեւում է, որ Պռշեանների տիրոյթի ամրող արեւ-մտեան կողմը, այսինքն, այն հատուածը, որ սահմանակից էր Այ-րարատ ու Նախճաւան գաւառներին, ամրացած է եղել թերգերի մի ամրողջական համակարգով, իսկ սահմաններն իրարից բաժնուած են ձորերով ու լեռնաշղթաներով: Այս հանգամանքը անշուշտ նպաստել է նոր իշխանական տիրոյթը ամուր պահելուն, մանաւանդ մոնղոլական զիրիշանութիւնն շրջանում (1238-45թթ.): Հստ Ա. Այլազեանի, ծահուկի Շահապուր, Խոռնի, Անուշաւան, Զընել (Զարիկնի) ամ-րոցները վերանորոգուել են միջնադարում<sup>10</sup>, փաստ, որ գալիս է հաս-տատելու մեր ենթագրութիւնը այս կապակցութեամբ:

Սիւնեաց նշանաւոր Պռշեան իշխանների անմասոյց Բոլորարերդ ամրոցը<sup>11</sup>, այսօր իր աւերակներով պահպանուել է ՀՀ Եղեգնաձորի շրջանի վերնաշէն զիւղից 7-8 կմ. հիւսիս արեւելք, Սր. Աստուածա-ծին (Սպիտակաւոր)<sup>12</sup> վանքից 1-2 կմ. արեւելք, Թաքեադոնդուրան (Սրկղունք) լերան կոնական զավաթին (նկ. 1): Ամրոցի մասին առա-շին յիշատակութիւնը մեզ է հագործում Սիւնեաց տան պատմիչ՝ Ստե-փանոս Արք. Օրբելիանը իր «Պատմութիւն նահանգին Սիւնական» աշխատավիւնում: Վարդանանքի պատերազմից յետոյ (451թ.) պար-սից Աթաշխութայի կողմից հայերի հետապնդան հետ կապուած, հե-ղինակը մէջբերում է հետեւել խօսքերը. «Հասնելով Վայոց Ձոր գասատի մէջնեղը, Եղեգիս եւ Մողան գետերի միջնու զանուող քարա-ժայռերով պատուած ըլլի մօտ, տեղի ամրութեան պատճառով մեծ արիւնահեղութիւն արեցին»<sup>13</sup>: Այստեղ, հեղինակը ուղղակի չի նշում բերդի անունը, սակայն, ինչպէս կը տեսնենք, Օրբելիանը նշում է

են 1,5-2 մ. բարձրութեամբ, տեղ-տեղ պահպանուած հաստաւուն պատերը, որոնք շրջապատում են ըլլի զավաթը և քարարերած են տանամերք հողամասի բուսական ծածկութունը: Տեղեկութիւններ չունենք ամրոցի միջնադարում յիշատակութիւնների մասին:

9. ԱՅԱՀԵԱՆ Ա., նշ. աշխ., էջ 140, 143, 151, 154:
10. Ամրոցը յիշատակում է Բոլորարերդ, Բոլորարեզ, Պողոսերդ, Պոռի բերդ անուն-ներով, «Հայաստանի յարակից շրջամների տեղամունների բառարան» այսուհետ՝ ՀՀՇԲ, Երևան, 1986, հստ. Ա., էջ 107:
11. Եղեգեցին յիշատակում է Բոլորարեզոյ յանապ(ատ), էջ 26, Բոլորաձոր անազատ, էջ 57 անուններով: Տե՛ս, «Ժ. դարերի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», կազմեց Լ. Ա. եազիկեան, Երևան, 1987:
12. ՕՐԲԵԼԻԱՆ ՍԵՓԱՆՈՍ, «Սիւնիքի պատմութիւն», թարգմանութիւնը և ծանօթա-գրութիւնները Ա. Ա. Արդարամանի, Երևան, 1986, էջ 107:

յարակից վայրերի մի քանի բնակավայրերի անունները, որոնք տեղաբաշխութեած են Բոլորարերդի շրջակայրում: Այսուհետեւ հեղինակը շարունակում է. «... իսկ միւսներին հետապնդեցին եւ նրանց մի մասին հասնելով մի բերդաժայռի ստորոտում, նեղ ձորակի մէջ՝ այնտեղ կատարեցին... Հենց այս տեղն էլ կոչուեց Անգեղաձոր: Եւ այստեղից արշակունից մրայ հասան երեք հարիւր մարդու Ռափինք եւ Արտարոյնք կոչուած զետափառնման տեղում, որտեղ նրանց էլ խողխողեցին: Եւ պարսիկներն այնտեղից անցան գէպի ձորաբերանը, ուր ձմիւ կողմից գէպի վեր նայում է Յափացքար կոչուած սուրբ վանքին...»<sup>13</sup>: Յիշատակուած Անգեղաձորը համապատասխանում է Շատինի գիւղին (Եղեգիսից ոչ հեռու): Աստիքը՝ Փոստունն է<sup>15</sup>, Արտարոյնքն՝ (Արտարոյն) այժմ՝ Էրտափին (երգափին) գիւղառեղն է, իսկ Յափաց վանքի աւերակները մինչեւ օրս գոյութիւն ունեն Սմբատարիդ ամրոցի գիմաց: Գետերի, ձորերի, բնակառնդերի, վանքերի անունները Բոլորարերդի շրջակայրում են, ուստի, կարելի է ենթադրել, որ պատմիչի նկարագրած գէպերը կապուած են Բոլորարերդին: Հ. Ղերանդ Ալիշանը մեկնարանելով Ստ. Օրբելիանի նոյն այն վկայութիւնը հաստատում է, որ «... Յարեւմադից Սրբկոնից լերանց, կայ ամայի հին գիւղն Պաչքենոց<sup>16</sup>, ունենալով ի հարաւոյ նոյնավէս ամայի և աւերակ բերդ համանուն՝ ի միջոցի կրկին ուսուց լերանց»<sup>17</sup>: Ալիշանն ամրոցը անուանում է «Պաչքենա բերդ» եւ այն նոյնացնուած Բոլորարերդի հետ. «... Բլուրն այն մեծամեծ վիմօք պատճառ է ամրացնուած՝ այժմեան աւերակն է Պաչքենա բերդի և նոյն գարձեալ Բոլորարերդ կոչեցեալ երբեմն...»<sup>18</sup>:

Ապագմափարական իմաստով Վայոց Զորը լինելով Սիւնիքի յոյժ կարեւոր առեւտրական եւ ապագական հանգույցը, իր անդնդախոր ձորերի, զետառովիտների ու կիրճերի, բնական արդեկների ամրողջական համակարգերի շնորհի, յաւ ամրացուած ու կառուցապատուած էր տարրեր նշանակութիւն ունեցող պաշտպանական կառոյցներով, ամրացներով, զղիակներով:

Բոլորարերդը կառուցուած լինելով Սիւնիքով անցնող Կոթ-Արփա գլխաւոր մայրուղուց արեւելք եւ տեղագրուած լինելով ոչ թէ լեռնա-

13. Նոյն տեղում:

14. ՕՐԲԵԼԻԱՆ Ա., նշ. աշխ., էջ 430, Տանօթագրութիւն 192:

15. ՕՐԲԵԼԻԱՆ Ա., նշ. աշխ., էջ 430, Տանօթագրութիւն 193:

16. Պաչքենա կամ Բաչքենզ զիւղը համարքատանանում է պատմական Սրիգունք զիւղին, որի գիմաց նոյնանուն լիսն է, որ յետազայռ միքանուանուել է Թերե-դուզուան կամ Թափագետներաբան, ՀՀԵՑԲ, Հատ. Ա., էջ 604: ՅՈՎԱՒԻՍԱՆ Գ., նշ. աշխ., էջ 19-20:

17. ԱԼԻՇԱՆ Հ. Պիեռնի, նշ. աշխ., էջ 129-130:

18. ԱԼԻՇԱՆ Հ. Պիեռնի, նշ. աշխ., էջ 130:

պարանցի, այլ առանձին՝ Եղեգեաց ձորերի նկատմամբ գերիշխող զիրք ունեցող մի բլրի ժայռացից գագաթին, հանդիսացել է իշխանական castellum - զղեսկամբոց տիպի<sup>19</sup> պաշտպանական կառոյց։ Ամբողջ մաս է կազմել Բոլորաբերդ-Մայտակաւոր երկենարոն պաշտպանական համակարգի, ինչպէս նաև նրանից ոչ հեռու, դէպի հիւսիսարեւմուտք գտնուող Սմբատաբերդ-Ճախացքար նոյնատիպ պաշտպանական համակարգը<sup>20</sup>։

Ամբոցի յօրինուածքի վերաբերեալ զոյլութիւն ունի Հայաստանի Պատմութեան Պետական Թանգարանի 2688 համարի նեցատիվը, որ վաւերագրում է Տարագրոսի 1934 թ. կատարած Բոլորաբերդի առաջին եւ միակ յատակագծի, որոշ մանրամասների չափագրութիւնները, որոնց կ'անդրագառանիք աւելի ուշ։ Ամբոցը յիշասակուել է 1475 թ. Արքահամ Մաղկողի Աւետարանում (Մատենագարան, 2634)։ Ինչպէս նշուած է ձեռագրի յիշատակարանում, այն պատկերագրուել է թանառ-Գլածոր վանքից ոչ հեռու գտնուող Բոլոր-բերդում<sup>21</sup>։ Բոլորաբերդի կառուցման մասին ստոյգ տեղեկութիւններ չեն պահպանուել։ Թ. Խակորեանը, ելնելով այն հանգամանքից, որ բերդը կոչուել է նաև Պողչաբերդ, նրա կառուցումը (ամենայն հաւանականութեամբ՝ վերանորոգումը - Ա. Ա. Զ.) վերագրում է ԺԳ. դարի գործ<sup>22</sup>։

Ինչպէս արդէն նշեցինք, Բոլորաբերդը տեղագրուած է Սրբունք ձորահովափ Թաքեաղոնդուրան բարձրագիր լեռան գագաթին (2912 մ.,)<sup>23</sup>։ Բլուրը գերիշխող զիրք ունի շրջապատի նկատմամբ, որի բարձունքից անամպ եղանակին, պարզորոշ երեսում է Եղեցիս գետի հիւսային հոսանքի ամրող գետահովիար եւ ամրոցից մօտ 7 կմ. Հիւսիս-արեւմուտք գտնուող Սմբատաբերդը։ Բոլորաբերդի զիրքը ընտրուած է այնպէս, որ մօտ 10-12 կմ. շատախից ունեցող շրջանակի մէջ, ներառանուում են նորաշեն, Եղեգմանոր, Սգարականոր, Սմբատաբերդ ամրոցները, որոնք գտնուել են Բոլորաբերդի հսկողութեան

19. Castellը բիւգանգական ամրոցի տիպ է, որ իրենից ներկայացնուում է յատակահծում քառակուսի կամ ուղղանկեն, չորս պատսպակաների մէջ ներփակուած եւ անկիւններում բուրգերով ամրացուած պաշտպանական կառոյց։ Այս տիպը փաստօրէն հանդիսանուում է անկիւններում բուրգերով ամրացուած քաղմանիստ պաշտպանական կառոյցի նմանատիպը<sup>24</sup>։
20. ԶԱՐԵԱՆ Ա., «Որոտնաբերդ-Որոտնավամբ պաշտպանական համակարգը», *Լրաբեր Հասարակական գիտութիւնների*, Երևան, 1986, հա. 10.
21. ԱԻԵՏԻ ՍԵԱՆ Ա. Ն., «Հայկական մանրամակարչութեան Դյանորի դպրոցը», Երևան, 1971, էջ 139։ Գրիշը հաւանաբար նկատի է ունեցել Բոլոր-բերդի անապատը, քանի որ, քիչ հաւանական է բերդում մի ձեռագրիր «Ճաղկեցնել», երբ նրանից ոչ հեռու Ար. Աստուածածին վանքն էր, ուր հաւագրագում էին ձեռագրութեամբ (Ա. Ա. Զ.):
22. ՅԱԿՈԲԵԱՆ Թ. Խ., «Հայ ժողովորի պատմութեան վայրերը», Երևան, 1978, էջ 110։
23. Երան բարձրութիւնը՝ ըստ Ա.Վ.ԴԱԼ.ԲԵԳԻԱՆ Խ. ի, «Հայաստանի համբավիտութեան բարտէզ», Երևան 1932, (քարտզում այս գագաթը կոււում է Շատիվանք)։

տեսադաշտում եւ ամենայն հաւանականութեամբ ունեցել են փոխազարձ հազորդակցութեան կապեր: Լեռան շրջանաձև ստորոտը ողորկ է եւ բուսական ծածկոյթից զուրկ թեքադիր բարձրանում է վեր, ուր հատում է զանգուածային, առանձին խմբաւորուած ժայռաբեկորներին: Բոլոր կողմերից անմատոյց ժայռածերպերն, արդէն բնականից անմատչելի են գարձնում վերելքը դէպի գագաթ (նկ. 2): Սօսեցման միակ, առաւել յարձար կողմը՝ հիւսիս-արեւելքից է, որտեղ ժայռազանգուածները խմբաւորուած են լեռան բուն գագաթին եւ դրանով իսկ հնարաւոր են գարձնում համեմատաբար գիւրին մօսեցումը մինչեւ գագաթի շրջակայքը: Այս հանգամանքից եկնելով է, որ բոլորածու ամրոցի պարսպապատերի ժամանակից զուրո՞ հենց այս հատուածում, կառուցուել է պարսպի առանձին կանգնած մի զօտի, որի մնացորդները մինչեւ այսօր պահպանուել են մօտ 13 մ. երկարութեամբ և 2,5-3 մ. բարձրութեամբ (նկ. 3): Բոլորաբերդի արեւմտեան կողմում, հարթավայրի վրայ, գետի փոքրիկ ձորակի ափին, նկատելի են հին բնակատեղի հետքեր՝ փոսերի ձևուով, հաւանական է, որ սրանք Բոլորաբերդ գիւրակի աւերակները լինեն<sup>24</sup>: Բլրի արեւելեան կողմում պահպանուել են նաև փոքր մատուռի աւերակներ:

Ամրոցի բոլորապարիսպներից ներս ընկած տարածքը զրագեցնում է 1,5 հա տարածութիւն և մինչեւ պարսպապատերի պահպանուած վերին մակարդակը լցուած է բնականից տոփհանուած հողի շերտով ու քարակոյտերով (նկ. 2): Ամրոցը յասակագծում եօթնանիստ բազմանիկն է, որի հարաւ-արեւելեան կողմը կազմում է 90 աստիճան և միակն է, որ անկիւնում ամբացուած չէ բուրգով (գծ. 4): Պահպանուած ամրոցապատերի բնդհանուր երկարութիւնը մօտ 120 մ. է: Հետաքրքիր է մեր կողմից արդէն նշուած Տարագրոսի 1934 թ. կատարուած չափագրութիւնը (գծ. 5): Ընդհանուր ասմամբ այն համարժէք է մեր չափագրութեան, սակայն երեւում է, որ Տարագրոսինը աւելի բնդհանրացուած չափագրութիւն է: Տարագրոսի մօտ հետաքրքական են հետեւել մանրամասները. մուտքի հատուածը (գծ. 5, 1), պարսպներից ներս՝ արեւմտեան եւ հարաւային կողմերում ցոյց տրուած աշխարհիկ կառոյցների զասաւորութիւնը (գծ. 5, 2), որոնք այժմ տեղում չեն պահպանուել (գծ. 4, 10), ջրամբարի մօտ տեղագրուած ձուածիր կառոյցը (գծ. 5, 3), մուտքից քիչ հիւսիս-արեւմուտք՝ այժմ էլ պահպանուած երդիկաւոր, յատակագծում ուղղանկիւն սենեակի

24. ԱՐԱՎԱՐԵԱՆ Հ., «Ազիզակովի շրջանի կուտարայի յուշարձանները», Երևան, 1955, էջ 44: ՀՀԵՏԲ, Համ. Ա., էջ 722ում Բոլորաբերդ գիւղը տեղագրուած է Գնիշիկ գիւղից 4-5 կմ. արեւելք, Վարդարուր լեռան բանջին, որի գագաթին նոյնական ամրոցի աւերակներ են պահպանուել Վարդարուր անունով: Այս բնակավայրը կազմունի թաքեագոնդուրան լեռան ստորոտի արեւմտեան մասում պահպանուած բնակավայրի հետ, որի մասին նշում է Հ. Եղիազարեանը (Ա. Ա. 2.):

կարուածքը (գծ. 5, 8): Տարագրոսի չափազրութիւնում պարսպապատի հարաւ-արեւելեան անկեան մօտ, հարաւային պատի մէջ առկայ է մի բայցուածք, որ հաւանաբար, իրենց կողմից ընկալուել է որպէս մուտք (գծ. 5, 5): Տեղում մէր կողմից կատարուած ուսումնասիրութիւնները այս փաստը չեն հաստաել եւ բացի դրանից, արամարանական չէ, միեւնոյն գծային ուղղութեան քրայ, իրարից ոչ հեռու, ամրոցի երկու մուտք ունենալ (գծ. 4, 1): Դա հակասում է նաև ռազմավարական սկզբունքներին: Չնայած ամրոցի պարսպապատիքի այս հաստածը շատ վատ է պահպանուել (պատի արտաքին երեսպատի քարերի մեծ մասը թափուած են), սակայն ստորին մակարդակին, բացուածքի հետքեր չենք փաստագրել: Տարագրոսի չափազրութիւնում կայ եւս մէկ տարբերութիւն: Ամրոցի պարսպապատի արեւելեան կողմից միջին մասում տեղադրուած մնամէջ աշտարակը (գծ. 5, 6), կիսաշրջան լինելոց բացի (իրականում այն քիչ զուրս արտայայտուած ձուածիր է, ինչպէս նաև աշտարակը, գծ. 4, 3), գծագրում ցոյց տրուած այնպէս, որ վերջին կառուցուել է աւելի ուշ ըրջանում եւ հպուած է ուղղագիծ պարսպի մօտաւորապէս միջին հատուածում: Այս փաստը եւս հաւաստի չենք համարում, քանի որ աշտարակը կառուցուած է պատի հետ միաժամանակ եւ գոյութիւն չունեն պատի եւ աշտարակի արտաքին մակերեւոյթների շարուածքի քարերի կցաքարեր: Դրանից բացի, ամրոցի շինարարները չեին կառուցի ամրոցի բազմանիսու՝ 40 մ. երկարութեամբ մի հասուած, առանց բուրգ-որմնայեցի կիրառման, առաւել եւս այն դէպքում, երբ իրականում այս աշտարակի տեղից սկսած, պատը փոքր անկիւնով բեկում է դէպի արեւմուտք (գծ. 4, 3, 4): Ընդհանրապէս ամրոցաշինութիւնն ընդունուած սկզբունքներից մէկն այն է, որ շինարարական կառուցուածքային առանձնայատկութիւններից են եղուով, պարսպապատիքի բնիման անկիւնում, որպէս կանոն, տեղադրուում են աշտարակներ, բուրգեր, որոնք կարող են լինել սնամէջ՝ եթէ օգտագործուել են զինապայքարի համար եւ հոծ՝ առաւելապէս որմնայեցի իմաստով: Բոլոր այս զինողութիւնները անշուշտ չեն արժէքագրուում Տարագրոսի գարավագրին կատարուած շատ կարեւոր չափազրութիւնը, որի չնորհիւ այսօր հնարաւորութիւն ունենք զաղափար կազմել աւելի քան կէս դար առաջ ամրոցի ընդհանուր վիճակի և նկարագրի մասին, համեմատելով այժմնան իրավիճակին:

Բոլորաքերիցի բոլոր կառուցները իրականացուած են տեղական մոխրագոյն քազալտէ ործաքարերից: Պատերը շարուած են կիսամշակ, միջին չափերի, առաւելապէջ հորիզոնական ուղղութեամբ տեղադրուում գրեթէ ուղղանկիւն քարերից՝ կրաշաղախի միջին բարձրութիւնը 6-7 մ. է (նկ. 2): Ինչպէս բոլոր հայկական միջնադարեան ամրոցներում, Բոլորաքերդում պատը նոյնպէս եռաշերտ է (պատերի այս կառուցուած-

քը յստակ երեւում է Տարապրոսի չափագրութիւնում): Ամրոցապատերի եւ աշտարակների արտաքին եւ ներքին մակերեւոյթների քարերի դէպի ներս ուղղուած պոչերը թողնուած են բաւականին երկար ու սուրանկիւն (գծ. 6): Այս նոյն սկզբունքով են չարուած նաև Բոլորաբերդից քիչ հեռու գտնուող Սմբատարերդ ամրոցի պարսպապատերը (նկ. 4): Բոլորաբերդում պատերի արտաքին չատուածները, մասնաւորապէս՝ որոշ վերին հատուածների շինարարական յօրինուածքները, շատ իւրատեսակ են եւ քիչ տարածուած Սիւնիքի այս ժամանակաշրջանի կառոյցներուում:

Ամրոցի հարաւարեւելեան պահպանուած, հիւսիսարեւմտեան հւարեւմտեան պարսպապատերի արտաքին մակերեւոյթների չարուածքի ձևեր, խիստ առըբերւում է մնացեալ չարուածքներից: Այսուեղ կիրառուել է «եղեւնածեւ» կամ «ձկնառ ողնաշար» կոչուած չարուածքը, որն իրականացեւում է հարիդոնական առանցքից մօտաւորապէս 45 աստիճան թեքութեամբ տեղադրուած եւ իրար նկատմամբ հակառակ թեքութիւն ունեցող քարերի չարուածքով (գծ. 7, Ա, Բ)<sup>25</sup>: Այս յօրինուածքը ընթանուում է պատի հատուածի ամրող երկարութեամբ և կրկնուում երկու կամ երեք մակարդակներով: Ամրոցապատի արտաքին վերին հատուածներուում պահպանուել են նաև իրար ուղղահայեաց զասաւորութեամբ զօտիներ, ընզ որում հորիզոնական քարերը երեք չարուով են՝ մէկ միւսի վրայ յաջորդուած, իսկ նրանց փակող ուղղահայեաց զասաւորութեամբ զօտին՝ մէկը (գծ. 7Դ): Նոյն ամրոցապատի վրայ հանդիպում են նաև զոյզ հորիզոնական եւ զոյզ ուղղահայեաց (գծ. 7Ե), եւ մէկական չարի հորիզոնական եւ ուղղահայեաց զասաւորութեամբ չարուածքի տեսակներ (գծ. 7Ի): Այս երկու սկրզբունքներով պատերի վերին հատուածների չարուածքները պահպանուել են Որունաբերդում, ամրոցի մուտքից ձախ, երկու ժայռագանգուածները փակող պատին (նկ. 5), Ագուլիսի ամրոցում, Տանակերափ Սր. Աստուածածին եկեղեցու արեւմտեան պատին (ԼՂԻՀ<sup>26</sup>): Մրատաց քարերով իրականացուած միակ հատուածը՝ ամրոցի հարաւարեւմտեան մազակապ մուտքն է, որն զիբորոշուած է դէպի հարաւ գանուում է բազմանիստ, ամենաերկար, ուղղագիծ բերդապարսպի արեւմտեան անկեան մօտ: Խաղմավարական նկատառումներից ելնելով, այսուեղ օգտագործուած է մուտքի առանցքի նկատմամբ 90 աստիճան դէպի արեւելք գիրքորոշման, պարածեւ թաղով սրահ-անցուցին, որ նապատակ ունէր զժուարացնել եւ ծուղակի մէջ զցել զիսաւոր

25. Նման չարուածք հանդիպում էնք նաև ԺՔ-ի գարերի Դադուանի և Անդրեվիկանի քարպացիական կառոյցներուում: Arkađij Golešenj, «Bašni ve gorax», «Աշտարակեները յեսներուում», Մոսկով, 1971, էջ 26:

26. ԱՅՎԱԶՅԱՆ Ա., Կ. աշխ., էջ 170, նկ. 8:

մուտքից ներս խուժած թշնամուն (գծ. 4,2): Այս սրահի թաղակապը իրազործուած է կոսպասառաջ բազալտէ քարերից և Հնարաւոր է, որ կառուցուած լինի ամրոցի հերթական վերանորոգման ժամանակ: Տեղում ստուգելն այսօր անհնար է, քանի որ ամբողջ մուտքային հանդույցը քողարկուած է վիտակներով: Մրրասաշ կամարակապ մուտքի լայնութիւնը 2 մ. է, իսկ ամբողջական վերականգնուած բարձրութիւնը, ըստ Տարագրոսի՝ 6 մ.: Առանց պեղումների զժուար է ճշգրիտ պատկերացում կազմել մուտքային թաղերի ներսի տարածութիւնների վիճակի ու ճարտարապեսական յօրինուածքի մասին: Տարագրոսի չափագրութիւնում մեր մուտքի երկու կողմերից պարսպապատից գուրուարտայայտուած պատերի ուղղանկիւն ծաւաղներ, որոնք ըստ զծագրելու ձեւից, յետազայի կցօններ են (գծ. 5, 1): Տեղանքի գծագրութեան հետ կապուած ուղղամափարական մէկ այլ սկզբունք կիրառուել է մուտքի տեղընարութիւն ժամանակ: Արդէն նշեցինք, որ դէպի բլրի գագաթ բարձրանալու միակ յարմար կողմէ հիւսիս-արեւմուտքից է, իսկ բերդամուտքի անմիջապէս առջեւի կողմը, երկու կողմերից քողարկուած է ժայռապանզուածներով: Այս ուղղութեամբ զէպի ներքեւ գահավէժ ժայռաքարեր են, որտեղից մազլցելով փաստօրէն անհնար է: Թշնամին ստիպուած էր բարձրանալ միայն բլրի հիւսիսակողմից և մուտքին մօտենալ շրջանցելով ամրոցապատերի ողջ երկարութիւնը ստորոտներով, շարժուելով զէպի հարաւ-արեւելք կամ հարաւ-արեւմուտք: Այս հանգամանքը շատ ձեռնուու էր պաշտպանուղների համար, քանզի նրան ունէին շատ յարմար բարձրագիր զիրք և լաւ տեսադաշտ բերդապատերից ու աշտարակներից յարձակումը կասեցնելու համար:

Ամրոցի յատակագծի բազմանկիւն կողմերի քանակը և երկարութիւնը, անկիւնների ու բուրգերի ձեւն ու չափերը, մուտքի կողմնաբուշուածն եւ անշուշտ պատերի տեղընարութիւնն ու բարձրութիւնը ստոյդ տեղանքում, պայմանաւորուած են բլրի գագաթի ժայռանածեկոյթի առկայութիւնից եւ առանձին քարագանգուածների ու ապառաժեկորների բնական դիրքագրութիւնից (նկ. 2): Այստեղ, ինչպէս Սիւնիքի բլրոր ամրոցներում, մեծ հմտութեամբ օգտագործուել է տեղանքի առանձնայասուկ աշխարհագրութիւնը, բնական խոչընդուների անկարուած օգտագործումը նորակերտ արգելք-պատնէների հետ սերտօրէն կապուած: Գագաթը շրջափակող ձեռակերտ պարսպապատերը կարծես լրացնում են ժայռապատնէների տարրեր մակարդակների վրայ ընթացող եւ զէպի գագաթն աստիճանանաձեւ բարձրացող բնական պատերի ամբողջական համակարգը: Բոլորաբերդի ներսի տարածութիւնը պարագծով, քիչ հարթեցուած եւ յարմարեցուած է աշխարհիկ կառոյցների շինարարութեան համար, մինչեւ միջին համարածը թողնուած է բնական տեսքով, որտեղ հսկայածաւալ բալտէ ժայռաքարերը, անկանոն ձեւով լցուած են իրար վրայ (նկ. 2):

Ամրոցի բուրգերը հինգ են, որոնցից պահնուել են չորսը՝ երկուսը քիչ դուրս արտայայտուած, մնամէջ, ձուածիր (գծ. 4, 3, 4), իսկ միւս երկուսը՝ կիսաշրջանաձեւ, չոծ (գծ. 4, 5, 6): Առաջին երկուսը հանդիսացել են Հոկիչ զիտաշտարակներ, որտեղից լաւ տեսադաշտ է բացւում զէպի ամրողջ ձորահովիտը: Այս բուրգերի մնամէջները կրկնում են արտաքին ձևածիր յօրինուածքը իրականացուած է բերդապատերի շարուածքի նման, իսկ հաստութիւնը տատանուում է 180-200 սմ.:

Բերդի մուտքից քիչ արեւելք գտնուում է թաղակապ, յասակագծում ուղղանկիւն, երդիկաւոր կառոյցի համեմատաբար լաւ պահպանուած շինութիւնը (գծ. 4, 9): Հողի մակարդակը ժամանակի ընթացքում այնքան է բարձրացել, որ այժմ թաղակապ կառոյցի ծածկը արտաքինից հաւասարուել է տեղանքին: Շինութիւն ներս մտնելը, այսօր անհնար է, սակայն Տարագրոսի չափագրութիւնում պահպանուել է այս կառոյցի կարուածքը եւ յատակագիրը, ըստ որի, այն հիւսիսային եւ հարաւային կողմերից ունեցել է լուսամուտներ, իսկ արեւմուտքից՝ մուտք (գծ. 5, 7, 8): Դժուար է առանց պեղումների ճշգրտութեամբ բնորոշել նրա նշանակութիւնը: Տարագրոսը այս կառոյցը անուանում է պարզապէս «սենեակ»: Կերչինից մօտ 15 մ. հիւսիս, բլրի ժայռագուգամի հակածիր կողմաւմ, գտնուում է յատակագծում կլոր, տրամաչափը 2 մ. եւ կտրուածքում դէպի յատակը լայնացող, մօտաւորապէս 2,5 մ. բարձրութեամբ ջրամբարը (գծ. 4, 8): Այն կառուցուած է բազալ, կիսամշակ քարերի անկանոն չարուածքից, որի ներսի մակերեսին մնացել են սվաղի ծածկոյթի մի փոքր հատուած: Ջրամբարի յատակը նոյնպէս լցուած է քարերով եւ հողով, բայց նրա չափերն ու յօրինուածքը պարզորոշ ըլբռնելի են (նկ. 6): Ամրոցապատերից ներս պահպանուած եւ երեւացող հատուածներից են նաև արեւելեան երկարութեամբ ընթացող սենեակների հետքերը (գծ. 4, 10), որոնց ճշգրիտ անդադրութիւնը հնարաւոր է պարզի միայն հնագիտական պեղումների արդիւնքներից եւ ի յայտ եկած ճարտարապետական արժեքների ուսումնասիրութիւնից: Համոզաւած ենք, որ այս աշխատանքների ժամանակ կը յայտնաբերուեն նաև ստորերկեայ անցուղին և մինչ օրս աննշան պահպանուած ջրմուգու ամրողջական հատուածները:

Բոլորաքերդ ամրոցը տեղընարութեան սկզբունքով եւ զիրքորոշմամբ նման է Սիւնիիրի Սպանա (Վայոց Ձոր), Երնջակ (Երնջակ գտաւո), Շահապնի (Շահապնի գտաւո), Աղջկաբերդ և Նահատակ (Նախճաւան գտաւո) ամրոցներին, իսկ որպէս ճարտարապետական տիպ, այն պատկանում է ներփակ բերդապարիսպներով զգեակամբոց տիպի պաշտպանական կառոյց: Այս տեսակէտից այն կարելի է համեմատել Արցախի Ղալաշա (ԺԳ. զար) եւ Արագածոտնի Յափլի (Գուառնագիւղ) (ԺԲ-ԺԳ դդ.) ամրոցների հետ: Յատակագծային յօրինուած-

քով, Բոլորաբերդը զարմանալիօրէն նման է Կիլիկիայի Կորիկոս՝ Ծովային ամրոց<sup>27</sup> և Յեմի Կյոյ ամրոցներին։ Կիլիկիան այս երկու ամրոցները եւս ունեն զգեստներին յատուկ ներփակ բերդապարիսպներ, որոնց բազմանկիւնների եօթ կողմերը անկիւններում ամրացուած են տարրեր յօրինուածք ու նպատակ ունեցող աշտարակներով ու որմնայեց-բուրգերով (գծ. 8 և 9)<sup>28</sup>։ Կորիկոս ամրոցի յատակագծի բազմանիստ հարաւ-արեւմտեան անկիւնը նոյնական ուղիղ է, սակայն, քանի որ այստեղ բեկեալի կողմերն աւելի երկար են, անկիւններում տեղադրուած է ուղղանկիւն բուրգը։ Յատակագծային այս նմանութիւնները խօսում են այն մասին, որ ամրոցի այս տիպը ստեղծուելով Բիւզանդիոնում եւ տարածում ու զարգացում ստանալով Հայաստանի տարրեր շրջաններում, կիրառուել է տարրեր թագաւորական ու իշխանական ուազմակարական ընդարձակ ծրագրերը իրականացնելու ժամանակ։

Բոլորաբերդ-Պոռշաբերդ ամրոցը Պոռշան իշխանների կողմից կիրառուած ամենանշանաւոր պաշտպանական ճարտարապետական կառույցն է, որ Սիւնեաց աշխարհի բերդերից առանձնանուած է տեղուարութեան եւ բնական խոչընդուների շատ հմուտ օգտագործմամբ, յատակագծային յօրինուած, պատերի շարուածքի զարգայօրինուածք յիշեցնող առանձնայատկութեամբ, մուտքային հանգույցի ինքնատիպ լուծումով։ Ամրոցը և նրան յարակից տարածքը կարիք ունեն պարբերական հնագիտական պեղումների եւ մասնագիտական պահպանումի ու բարեկարգման։ Այս դէպքում միայն հնարաւոր կը լինի լիարժեք կերպով ներկայացնել Վայոց Ձորի նշանաւոր ամրոցներից մէկը՝ Բոլորաբերդը։

ԱՐԱՐԱՏԻ ԶՈՒՄԱՆ

27. Կորիկոսը բաղկացած է երկու ամրոցներից՝ ցամաքային և ծովային։

28. Զափագրութիւնները բառ՝ R. W. ROBERDSի «The fortifications of Armenian Cilicia», Washington, 1987.

### Résumé

## BOLORABERD OU LA FORTERESSE DE PROSHABERD

ARA ZARIAN


L'Auteur en sa qualité d'architecte, étudie avec compétence en cet article, tout ce qui concerne la forteresse arménienne dénommée «boloraberd» qui se trouve en la Province «Vayoc' dzor» de l'Arménie historique et qui a été le fief principal des Princes Proshian.

Cette forteresse a été pour l'histoire et l'architecture arménienne une des constructions défensives les plus fameuses.


Esquissant en des traits rapides l'historique et l'emplacement géographique de la forteresse «Boloraberd», l'auteur passe à l'étude détaillée de la forteresse dans sa construction architecturale, la technique constructive, nous donnant aussi les plans détaillés de la forteresse préparés par lui-même ainsi que des belles photos faites par d'autres personnes.



Ֆլուորիտավոր պիրիանոր տնտեսական գոյացություններ, գ. Գառնաբարձ, 1985 թ. :




Կառավարության, գ. Պալատական, 1985 թ.,  
սեպտեմբերի 25-ին հայտնաբերված  
պահանջանակը.



Ձևականացնելու առաջնային գործընթացների հիմքում-արիթմում կազմակերպված առաջնային գործընթացները՝ գ. Գալյուսանի, 1985 թ.):



Առաջնահայտությունները պահպանվում են պատմական ժամանակաշրջանում՝ պահպանական գործությունների մեջ:




Նկ. 5. Արամաքերդ ամրոցի (Ծղուկի) յենապատի մասնամասն  
(լուսանկարը հեղինակի, 1984 թ.):



Նկ. 6. Բոլորավերդի ամրոցի ջրաւազանի տեսքը ներսից  
(լուսանկարը՝ Գ. Գալստեանի, 1985 թ.):




Նկ. 7. Բողոքարկող ամրոցի մուտքի ճականաբարի հասուածը  
(լուսանկար՝ Գ. Յովսեփիսի, 1934 թ., Հայաստանի Պատմութեան  
թանգարանի արխի, նեզատի հմ. 653):






Գծագիր 2. Պողշեան իշխանների  
տիրապետութիւնները Սիւնիքում ԺԲ-ԺԴ դարերում  
(ըստ Գ. Ցովաշփեանի «Պողշեանք կամ Խաղբակեանք Հայոց  
պատմութեան մէջ» աշխատութեան տուեալների):




Գծագիր 3. Բերդամբոցների տեղադրութիւնը Սիւնիքի Պոռշանների տիրապետութիւնում ԺՅ-ԺԳ դարերում:




1986)

Պատմական պատմությունները կազմում են առաջնահարուսակ գործակագիրը:




Գծագիր 5. Բոլորարերդ  
լիւթեական շինուազը՝  
կառագիւն Ցողովուն կատարելու (1934 թ.):


## ԱՄՐՈՑԱՊԱՏԵՐՈՒ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԸ




Գծագիր 6. Ամրոցապատերի կառուցուածքը:

ԲՈԼՈՐԱԲԵՐԴԻ ԱՄՐՈՑԻ ՊԱՐՄՊԱՊԱՏԵՐՈՒ ԱՐՏԱՐԻՆ  
ԾԱՐՈՒԱՅՆԵՐՈՒ ՅՈՐԻՆՈՒԱԾՔՆԵՐԸ

Գծագիր 7. Բոլորաբերդի ամրոցի պարսպապատերի  
արտաքին շարուածքների յօրինուածքները:



Գծագիր 8. Յենի Կյոյ ամրոցի չափագրութիւնը  
ըստ Ռ. Վ. Էդվարսի, 1979 թ.:



Գծագիր 9. Կորիկոս ամրոցի չափագրութիւնը  
ըստ Ռ. Վ. Էդվարսի, 1981 թ.: